

# ԱՐՇԻՆ ՄԱԿ-ԱԿԱՆ



Բ. Տպագրութիւն, քարեփոխած

18



894.362-293

Ա

ԲԱՐԵՓՈՒԱՆԾ

# ԱՐՁԻՆ ՄԱԼ-ԱԼԱՆ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ

A 4725

Բ. Տպագրութիւն



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՕԵԱ» Մուգ. պր. № 8.

1916

1870

1870

1870

1870

1870



1870

1870

ՀԱՐՇԻՆ ՄԱՆԱԼԱՆՆԻ

Առաջին թարգմանիչը և ղեկավորը



Սեդրակ Մաղալեան



## ԵՐԿՈՒ ԽՕՍԿ

«Արշին մալ-ալան» օպերետը խաղացւեց առաջին անգամ Արհեստաւորների աիումբում, (Ремесленный клуб). օպերետը խաղացւեց դերասան Ս. Թորոսեանի նախաձեռնութեամբ և թարգմանութեամբ Ս. Մաղալեանի: Օպերետի յաջողութեանը քիչ դեր չը խաղաց նաև խելացի դերաբաշխութիւնը՝ որոնք մինչ այժմ մըցակից չունեն և առանց այդ անսամբլի կասկածելի կը լինի խաղի ներդաշնակութիւնը:

### ԱՌԱՋԻՆ ԱՆՍԱՄԲԼ

Ասկեար, վաճառական . . . . .	պ. Բաղդասարեան
Խալա, դրա մօրաբոյրը . . . . .	տ. Մանուչարեան
Սուլէյման, Ասկեարի ընկերը . . . . .	պ. Ալլանվերդեան
Սուլթան-բէգ . . . . .	պ. Ս. Թորոսեան
Գիւլչօհրա, դրա աղջիկը . . . . .	տ. Մարգօ
Ասիա, Սուլթ ան-բէգի եղբօր աղջ. օր. Աստղիկ	
Թէլի, դրանց աղախինը, . . . . .	տ. Ս. Վարդիթեր
Վալի, ծառայ . . . . .	պ. Ղազարեան

Օպերետայի դիրիժօրը՝ պ. Ս. Մաղալեանը բաւականին գեղեցիկ եղանակներով և հմուտ դիրիժօրութեամբ փայլեցրեց «Արշին մալ-ալան» օպերետը:

Յ. Բ.



Ախ, միթէ կը ճարւի՞ աշխարհում  
 Ինձ նման դարդօտ մի՞ մարդ.  
 Հալ չը մնաց ինձանում,  
 Մնալով այսպէս մենակ:

Ախ, միթէ շատ պէտք է տեի,  
 Սյս իմ շարշարանքը.  
 Ծնւեցի ես երևի որ,  
 Մենակ անցնի իմ կեանքը:  
 Ս. Թ.



Դարդերիս մի ճար գտիր, խալա, խալա,  
 Տանջում եմ, ինձ ազատիր, խալա, խալա,  
 Միթէ ես այսպէս միշտ պիտ տանջւեմ,  
 Ախ, այս տանջանքից ազատիր:



Սև-սև աչերով,  
 Գեղ ու վառվռուն.  
 Կարմիր այտերով,  
 Վարդին նման դուն.  
 Ինքդ մանուշակ,  
 Զը բացւած կոկոն.



Հոտդ անուշիկ,  
Բուրմունքով լեցուն

Տեսնողի աչքին,  
Կը տամ երանի.  
Ով որ քեզ ճամբին,  
Միշտ կը պատահի,  
Քեզ տեսնելու պէս,  
Սիրաս է այրում,  
Ուզում եմ խօսել,  
Լեզուս է լռում:

Անխիղճ անասուած  
Ի՞նչ մեղք արի ես.  
Որ ինձ չարաչար,  
Մաշում, հալում ես.  
Թողիր ինձ մենակ,  
Հեռու գնացիր.  
Գիշեր ու ցերեկ,  
Վշտի մատնեցիր:

Ահա գնում եմ,  
Անյայտ կորչելու.  
Ես հեռանում եմ,  
Քեզ չը տեսնելու.  
Մնաք բարեաւ դուք,  
Իմ քաղցր յոյսեր,  
Որ չքացաք դուք,  
Իմ երազ օրեր:

\* \* \*

Չէզրրաս ծածկեմ գնամ,  
 Խալան քեզ մատաղ Ասկեար.  
 Քեզ համար աղջիկ գըտնեմ,  
 Խալան քեզ մատաղ Ասկեար:

Քո գըտածդ ինչ կանեմ,  
 Այդ լաւ չի լինի խալա,  
 Աղջիկը ես պիտ առնեմ,  
 Արգեօք ինձի դուր կըգայ:

Մեր օրէնքում այդ չը կայ,  
 Որ աղջկան տեսցնեն,  
 Եկ իմ խորհրդով գնայ,  
 Եւ այնպէս դու գործ արա:

Քեզ լաւ յայտնի է խալա,  
 Որ չը տեսած առնիլ չեմ,  
 Թէ կուզ չքնաղ լինի նա,  
 Ես կըկնում եմ առնիլ չեմ:

Դու շատ ուղիղ ստացիր,  
 Եւ այդպէս արա աղա,  
 Իսկ դու քեզ հանգիստ պահիր,  
 Զուր մի չարչարուիր խալա:

\* \* \*

Հաւատացիր ինձ Ասկեար ջան,  
 Անկեղծ եմ ես քեզ բարեկամ,  
 Խորհուրդներիս դուն հետևիր,  
 Եւ քեզ համար Աղջիկ գըտիր:



«Արշին մալ-ալան» Յ. Բաղդասարեան (Ասիկաբ)





«Արշին ժալ-ալան» Յ. Բաղդասարեան, Աստիեար (Արշին ժալան)

Արշին մալչի ես կը լինեմ,  
 Եւ իմ աչքով աղջիկ կընտրեմ,  
 Իսկ քո խորհուրդներիդ համար,  
 Մի լաւ նւէր քեզի կառնեմ:

Գու տեսար որ ես խելօք եմ,  
 Եւ ինքս էլ շատ ազնիւ եմ,  
 Ասած նւէրդ որ առնես,  
 Ինչ որ խնդրես կը կատարեմ:

Վալի ինչո՞ւ ես մտածում,  
 Եւ զուր ինչի ես տանջւում,  
 Քեզ էլ մի աղջիկ կը գըտնենք,  
 Իզուր ինչո՞ւ ես անքաշում:

Ա՛խ աղա ջան բարի եղէք,  
 Եւ ասածներդ կատարէք,  
 Գիշեր-ցերեկ ես տանջւում եմ,  
 Խեղճ Վալին եմ ինձ ազատէք:

\* \* \*

Այդ ինչ է քո դարդըդ,  
 Այս ինչ տխրութիւն է սա.  
 Ինչ է քո տանջանքը,  
 Ասա տեսնեմ դու ասա:

Մի ամաչիր պատմիր,  
 Ասկեար քո դարդըդ ինձի.  
 Ինչ ես դու մտածում,  
 Նման այդպէս դերիի:



«Արշին մալ-ուլան»

Յ. Դադարեան (Վալի)

Լ. Ալևանկերդեան (Սուլեյման)

Այս աշխարհում միթէ,  
 Քո դարդերին ճար չկայ.  
 Վերջ տուր մտածմունքիդ,  
 Պատմիր տեսնեմ թէ ինչ կայ:

Դու միթէ չես լսել,  
 Որ այսպիսի առած կայ.  
 Աշխարհս երեսին,  
 Անկարելի բան չկայ:

Ս. Ս.

\* \* \*

Սեւ-սև աչեր, գեղեցիկ,  
 Ինձ մի անի խելագար,  
 Տանջուում եմ գիշեր-ցերեկ,  
 Քո սիրովդ անդադար:

Ինչո՞ւ համար մտածել,  
 Եւ իզուր տեղը տանջւել,  
 Արի մենք ամուսնանանք,  
 Որ բոլորս ուրախանանք:

Դու շատ ուղիղ ասացիր,  
 Որ լաւ է ամուսնանանք,  
 Եւ յետոյ, մենք բոլորս,  
 Վարենք ուրախ հանգիստ կեանք:



\* \* \*

—Աստուած օգնական լինի,  
 Իմ սիրելի ընկեր Ասկեար,  
 Քեզի լաւ խորհուրդ տւի,  
 Իմ սիրելի ընկեր Ասկեար.  
 Մի լաւ հարսնիքդ անենք,  
 Իմ սիրելի ընկեր Ասկեար.  
 Ուրախ-ուրախ քէֆ անենք,  
 Իմ սիրելի ընկեր Ասկեար:

—Ես ըլլեմ իմ Աստուածը,  
 Ես քեզ մատաղ աղա Ասկեար  
 Էս աղէն շատ լաւ է ասում,  
 Ես քեզ մատաղ, աղա Ասկեար:  
 Շուտ արա ամուսնացիր,  
 Ես քեզ մատաղ, աղա Ասկեար,  
 Իմ ճանապարհս էլ բացւի  
 Ես քեզ մատաղ, աղա Ասկեար:

Ամենից լաւը նա է,  
 Որ գու մեզի լսես Ասկեար,  
 Եւ այդ շորերդ փոխես,  
 Արշին-մալշի դառնաս, Ասկեար.  
 Փողոցները ման գալով,  
 Զիթեր վաճառելով, Ասկեար,  
 Քեզ համար մի լաւ գեղեցիկ  
 Հարսանացու գտիր, Ասկեար:

Ս. Մ.

\* \* \*

Կարծես գասայ ես իմ եարը,  
 Իմ դարդերիս դեղն ու ճարը,  
 Ասուած դուն օգնական եղիր,  
 Միայն սա է ինձ յարմարը:  
 Ս. Մ.

Որդից պատահեց, Ասուած իմ,  
 Արշին մալ ալան,  
 Սիրտս կրակով ցրեց իմ,  
 Այրուում եմ:

Ինքը լաւ, խօսքերը քաղցր,  
 Արշին մալ-ալան,  
 Սիրեցի ամենից բարձր.  
 Մալ-ալան:

Ինչ վատ ես տրամադրւած,  
 Գիւլչօճրա, մեզ ասա,  
 Ինչպես մի խելագարւած,  
 Գիւլչօճրա, մեզ ասա,  
 Սիրտդ ինչն է տխրած,  
 Գիւլչօճրա, շուտ ասա,  
 Մեզ ասա, Գիւլչօճրա.  
 Օրիորդին այդ չի սաղի,  
 Տխրեցն ու մտածիլ,  
 Այդ ինչ է ընդ պատահել,  
 Գիւլչօճրա, շուտ ասա,  
 Մեզ ասա, Գիւլչօճրա:  
 Ս. Մ.

\* \* \*

Նստած ծառի տակ,  
Ե՛ս մեն ու մենակ:  
Սիրտս խոցուած,  
Վշտերով պատած:

Տխուր ու տրտում,  
Ե՛ս վեր էի նայում,  
Եթերում նայում,  
Ու դարգս ողբում:

Եւ չը կար մէկը,  
Վշտերս պատմէի.  
Իմ խոցված սիրտը,  
Նրա առաջ բանայի:

Մէկին էի սիրում,  
Թողեց հեռացաւ.  
Նա իմ սրտում:  
Վառ կրակ լցրաւ:

Ա՛խ, ինչ դժբախտն եմ,  
Ե՛ս այս աշխարհում,  
Որ տանջւած սրտիս,  
Մօտ ընկեր չունեմ:

Որ բանամ սիրտս,  
Դարդերս պատմեմ,  
Անթիւ վշտերս,  
Ցաւերս մեղմեմ:

Յ. Բ.—ԵԱՆ

A I 4795



\* \* \*

Մէկ ձի առայ աշխարհ ընկայ,  
 Ե՛կ առնեմ դիւբիւմազ,  
 Վերջը եկայ բեզի գտայ,  
 Մարալս դիւբիւմազ,  
 Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ  
 Ե՛կ առնեմ դիւբիւմազ,  
 Տուն կը շինեմ քեզի համար,  
 Ե՛կ առնեմ դիւբիւմազ,  
 Մէջը զմրուխտ, ոսկի մարմար,  
 Մարալս դիւբիւմազ  
 Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ,  
 Ե՛կ առնեմ դիւբիւմազ,  
 Ե՛ս այրի դու այրի դու եկ,  
 Ինձ արի դիւբիւմազ,  
 Ինչ ասեմ դու ինձ յօժարիր,  
 Մարալս դիւբիւմազ  
 Ս. Մ.

\* \* \*

Բէզի, աղջիկը երևի սա է,  
 Մեր Ասկեարը շատ է հաւան կացել  
 Չեզ եմ ասում, շատ է հաւան կացել  
 Ո՛վ, կիմանար, որ Սուլթան-բէզը,  
 Այսպէս, նախշուն, աղջիկ է ունեցել,  
 Չեզ եմ ասում, աղջիկ է ունեցել  
 Ափսոս, ան սփսոս, ես չէի իմացել,  
 Որ այսպիսի գեղեցիկն է եղել,  
 Չեզ եմ ասում, գեղեցիկ է եղել,  
 Լ. Սլ.



«Արշին մալ ալան» Ս. Քարսեան, (Սուլթան-բէգ)

\* \* \*

Եարար, ինչ մեղք էի գործել,  
Որ ընկայ, այս տանջանքի մէջ,  
Աղաչում եմ քեզ Սասուած իմ,  
Շուտ ազատիր կամ տուր ինձ վերջ:

Միթէ ես նրան սիրելով,  
Գործեցի այնպիսի մի մեղք,  
Որ ինձ իմ եարից բաժանեն,  
Եւ ինձ, զիշեր ցերեկ տանջեն:  
Ս. Մ.

\* \* \*

Ա՛խ երանի այն օրին,  
Երբ կրտսնեմ իմ եարին,  
Կեանքս նրան զոհ կանեմ,  
Մատաղ կանեմ իմ եարին,  
Անասուած, անասուած, ո՛վ անխիղճ եար,  
Գու զուտով արի, խղճայ քո եարին,  
Հալ ու մաշ եղայ, քեզ համար:

\* \* \*

Մենք հասանք մեր նպատակին,  
Գուք էլ հասնէք, ձեր մութագլին,  
Ասուած կեանք տայ մեր Ասկեարին,  
Պատճառ եղաւ, մեզ բոլորին:  
Շնորհակալ եմ ես, ձեզանից,  
Մուլէյմանից որ, խրատ աւաւ ինձ,  
Իէգին որ աղջիկը աւաւ ինձ,  
Ասուած կեանք տայ, մեզ բոլորիս,  
Ս. Մ.

Զօրեղբայրս մեզ կը տանջի,  
 կը շարձարի, մեզ կըսպանի,  
 Ով դու գթառատ Ասուած,  
 Խնայիր մեզ:  
 Գիւշահրա, Գիւլշահրա, եկ այստեղ,  
 Խօսք ունեմ քեզ ասելու:

Ինչ կայ չը լինի,  
 Յաւերս էք նորոգելու:

Գիւլշօհրա քեզի ամօթ է,  
 Ի գուր անի ու վանի մի անի,  
 Ի սէր Աստծոյ հանգիստ եղիք  
 Թէ չէ հայրդ կ'ըլսի:

Ես չեմ մոռնայ այն տղային,  
 Այն սիրուն երիտասարդին,  
 Ղուբբան եմ ես նրա ջանին,  
 Նա է ինձ համար սիրելին,  
 Ի գուր տեղը դուք ինձ միք շարձարի:

Գիւլշօհրա քեզի ամօթ է,  
 Ի գուր անի ու վանի մի անի,  
 Ի սէր Աստծոյ հանգիստ եղիք,  
 Թէ չէ հայրդ կ'ըլսի.  
 Եկ հոգեակս դու մեզ լսիր,  
 Եւ այդ տղային մոռացիր,  
 Չէ որ նա քեզի յարմար չի,  
 Մեղք ես ի գուր մի շարձարիք,  
 Մեղք ես ի գուր հալ ու մաշ մի լինիր:



«Արշին մալ-ալան» Յ. Բաղդասարեան, Ասկեար (Արշին մալչի)



\* \* \*

Ինձ գցեց այս դարդերի մէջ,  
Սրշին մալ ալան.

Հալ չը մնաց իմ ջանիս մէջ,  
Մյւռում եմ:

Զոր ու գիշեր մտածում եմ,  
Սրշին մալ ալան.

Կարծես թէ ես երազումս եմ,  
Տանջւում եմ:

Քեզ տեսնելուն պէս սիրեցի,  
Սրշին մալ ալան.

Օրէցօր խելագարուեցի,  
Մաշւում եմ:

Ս. Մ.

\* \* \*

Այս ետրաբ, վերջ կը վնի,  
Մեր այս ցաւ ու հոգսերին,  
Աստուած դու խղճայ մեզի,  
Եւ վերջ տուր մեր վշտերին:

Ինչու համար պէտք է մենք,  
Խաւարում այսպէս տանջւենք,  
Աստուած դու խղճայ մեզի,  
Եւ վերջ տուր մեր վշտերին:

Ս. Ք.



«Արշին մալ-ալան» ա. Ս. Վարդիթեր (Թեւե)

\* \* \*

Ե՛կ իմ սիրած, ընդ եմ սպասում՝  
 Գիշեր-ցերեկ մտածում եմ,  
 Աղի արտասուքներ թափում,  
 Այրւում եմ, բայց ընդ տեսնում չեմ:  
     Ինչ կը լինէր յանկարծ գայիր,  
     էրւած սրտիս ճար բերէիր.  
     Ձեռքիցս բռնած ինձ տանէիր.  
     Սիրուն Թէլլի ինձ ասէիր:  
 Ես էլ կրծքիդ փաթաթւէի,  
 Ծիծաղէի, արտասուէի,  
 Քո Թէլլին եմ ընդ ասէի,  
 Մարմար կրծքիդ ես փարւէի:

Տիկ. Ս. Թ.

\* \* \*

Այն ո՛վ էր, եարար,  
 Սիրաս ինչո՞ւ տյապէս ախրեց,  
 Աղաչում եմ ընդ, Տէր իմ  
 Ա՛խ, ա՛խ, այրւում եմ:  
     Որքան գեղեցիկ,  
     էր այս երիտասարդը,  
     Աղաչում եմ ընդ Տէր իմ  
     Ա՛խ, ա՛խ, այրւում եմ:

Ս. Ս.



«Արշին մալ-ալան» Յ. Բաղդասարեան, Ասկեար (Արշին մալի)

\* \* \*

Վերջապէս գտայ, ես իմ ուզածը, ա՛յ աւաղ,  
 Ամբողջ քաղաքը, շրջելուց յետոյ  
 Շատ էլ ինձ յարմար է, իմ սիրածը, ա՛խ ա՛յ աւաղ,  
 Եւ ինքն էլ ինձ, սիրեց շատ սրտով:

Ե՛կ, եկ, սիրունիկս,  
 Ե՛կ, եկ, գեղեցիկս,  
 Քեզ տեսնելու համար,  
 Մալչի եմ դարելի:

Սրանից լաւը, ես չէի գտնի, ա՛յ աւաղ,  
 Եթէ ման գայի, ես հաիւր տարի,  
 Մեզի նման էլ իրար յարմար դոյզ, ա՛յ, աւաղ,  
 Դըժւար թէ մէկ ուրիշ գըտնուի:

Ե՛կ, եկ, սիրունիկս,  
 Ե՛կ, եկ, գեղեցիկս,  
 Քեզ տեսնելու համար,  
 Մալչի եմ դարելի:

Ս. Մ.

Բաւական է, մի լաց լինիր,  
 Ի՞նչ պատճառով, ո՛ւմ համար.  
 Մի՞թէ հօրից լաւ կը լինի,  
 Արշիւն-մալչին քեզ համար:

— Ձեռքիս իրաւունքներ չունեմ,  
 Ո՛ւմից խնդրեմ օգնութիւն,  
 Հայրս դէպի ինձ խիղճ չունի,  
 Այս ինչ անասուածութիւն:

Ասիր, խօսիր, ուրախ եղիր,  
 Քեզ չի սաղի տխրութիւն,  
 Ինչպէս մենք ենք այնպէս եղիր,  
 Որ ձեռք բերես, լաւ անուն:

Ս. Մ.

\* \* \*

— Հըլէ ինձ համար մարալ էս  
 Ե՛ս քո աչերիդ մատաղ,  
 Ի՞նչ կըլի ինձ ե՛ւր ըլես  
 Ես քո ծամերիդ մատաղ:

— Դու ինձ համար մարալ չես,  
 Ի՞նչ էս ուզում ինձանից.  
 Լաւն այն է որ հեռանաս,  
 Ուր որ է կը գայ աղէս.

Ս. Մ.

\* \* \*

Սյա ինչ ուրախալի եղաւ,  
 Որ մենք մեր ուզածին առանք,  
 Ասուած կեանք տայ մեր Սսկեարին,  
 Որ բոլորս ուրախացանք:



«Արշին մալ-ալան» Յ. Ղազարեան (Վալի)





Սուլթան-բէգն էլ առողջացաւ,  
 Որ իր ընտրածին նա առաւ,  
 էլ հիմա մէջքը չի ցաւի,  
 Խալային նա արժանացաւ:

Բա չէք ասի ես էլ գտայ,  
 Եւ իմ ընտրածին ես առայ,  
 Իմ Թէլլօիս մատաղ լինեմ,  
 Ես էլ նրան արժանացայ:

Խանուժը աղին, — Ասիան Սուլէյմանին,  
 Խալան Սուլթանին, Թէլլին նոքարին,  
 Ամենքս հասանք մեր մուրաղին,  
 Աստուած թող կեանք տայ մնացողներին:

\* \* \*

Ինքս հարուստ վաճառական լինելով,  
 Ես դիտմամբ շրջիկ չթէ վաճառ դարձայ,  
 Ու քանի օր փողոցները մանգալով,  
 Վերջի-վերջոյ ես իմ ուզածին գտայ  
     Ե՛կ, իմ աղաւնեակս,  
     Ե՛կ, դու իմ հոգեակս, Ե՛կ,  
 Սպասում եմ, շուտ արա Ե՛կ,  
 Այրւում եմ, շուտ Ե՛կ, Ե՛կ:

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



ԳԱՆ ՀԻՃՆԱՐԱՐ ԳԻՒՆ ԳՐԱԿ.



FL0039882

[104]

A  $\frac{I}{4725}$

Արտատպելու իրաւունքը  
վերապահւած է

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ  
հասցէով Կазарменная ул. № 3. Օ. Багдасаряну.